



Մեսրոպ Արք. Աշճեան իր մօր ծննդավայրին մէջ՝ Բալուի Հաւառ գիւղի աղբիւրին մօտ:

ՊԱՀՆ ՈՒ ՅԱԻԵՐԺՈՒԹԻՒՆԸ

ԱՊՐԻԼ 24

Այսօր Ապրիլի 24 է: Քանի մը օրէ ի վեր կը գտնուէի Սպանիոյ Սեվիլլա քաղաքը, ուր անցուցի Աւագ շաբթուան վերջին օրերը եւ 2000 թուականի Զատիկը: Ուրկէ՛ ուր: Ես այսօր Տէր Զօր պէտք չէ՞ ըլլայի: Մեծ Եղեռնի 85-ամեակն է, 1700-ամեակի ծրագիրներուն մէջ շուրջ հինգ տարի առաջ յատուկ կերպով երեւակայած էի այս օրը: Ուխտագնացութեան շարքին՝ 2000թ. Ապրիլին անցընել պատմական Հալէպ քաղաքին մէջ, Աւագ ուրբաթ օրը ըստ տեղական ասանդութեան շրջիլ Սալիպէ թաղի եօթը եկեղեցիները: Զատիկը դիմաւորել Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ ու յաջորդ օրը երթալ Տէր Զօր. Պատարագ, հոգեհանգիստ, ողբա՛ մ մեռելոց, ապա յաջորդ օրը մեկնիլ Հայաստան: Ծիծեռնակաբերդ բարձրանալ հարիւր հազարաւոր հայերու հետ, կոչէ՛ մ ապրողաց... Եւ մեր Փրկչին յարութիւնը, մեր ազգի յարութիւնը նշել ա՛յս ոգիով: Բայց այս բոլորը ո՞ր մնացին: Յուսախաբութիւն, վիշտ, Հայրապետի մահ, հրաժարական, ու ահա ես զիս գտայ Սեվիլլայի մէջ, ուր Ս. Նշանի ֆրանսերէնի դասերէս գիտէի Աւագ Ուրբաթի իւրահատուկ յիշատակութեան մասին: Աւելի պարզ խօսելով կերպով մը այս Ապրիլ 24-ին ես ինձմէ փախուստ էի տուած, բայց ի վերջոյ, կրնա՞ յի ինձմէ հեռանալ, իմ եսէս դուրս ելլել: Ու չկրցայ, ու ահա այսօր ամբողջ օրը ես իմ ժողովուրդին հետ եմ... Անթիլիաս, Նահատակաց Յուշարձան, Նոր Զուղա, Նիւ Եորք, Երեւան, Երուսաղէմ, Տէր Զօր: Հոն՝ ուր եղած եմ նախկին տարիներու Ապրիլ 24-երուն, ապրած եմ մեր նահատակներու յիշատակով, պատարագած, քարոզած, հոչակած: Հիմա ես ինձի իրենց հոգեհանգիստ կը մատուցանեմ, կ'աղօթեմ մեռելներուս համար, որոնցմէ փախեր էի: Բայց փախէ՛ր էի: Հիմա հիւրանցի սենեակի մէջ եմ, կը փորձեմ սիրտս հանգստացնել, հոգիս խաղաղեցնել, ինձի հետ հաշտուիլ: Եւ այս քանի մը տողերը կը գրեմ Ֆեթիյէ Չէթինին:

Ո՞վ է. բացատրեմ. վերջերս, Փարիզի «Յառաջ» թերթին մէջ նամակ մը կար, արտատպուած Պոլսոյ երկլեզուեան «Ակօս» թերթէն: Տեսակ մը մահազոյ էր, ուր այդ կիներ կը պատմէր իր մեծ մօր՝ Հերանոյշի մասին: Հերանոյշը Հայրապետ Կատարեանի թոռնիկն էր, կ'ըսէր, այդ թրքուհին, Յովհաննէս եւ Իսկուհի Կատարեաններու աղջիկը, Բալուի Հապապ գիւղէն: Ու յետոյ կը պատմէր թէ նախակրթարանի չորրորդ դասարանին «ցաւերով կուտակուած ժամանակները կուզան», Հերանոյշ իր ամբողջ ընտանիքը կը կորսցնէ, նոր ընտանիք կը կազմէ, նոր անուն կ'ունենայ: Կը մոռնայ իր լեզուն եւ կրօնքը: «Չզանգատեցաւ, բայց երբեք չմոռցաւ հայրն ու մայրը, գիւղը, հարազատները»: (Տե՛ս «Յառաջ», 18 Փետր. 2000թ., Ա):

Հերանոյշ որ կարօտով կ'ապրէր ամբողջ 95 տարի, կը մահանայ 2000թ. սկիզբին: Ահա հիմա ալ իր թոռնուհին համարձակութիւնը կ'ունենայ փնտռելու իր մեծ մօր ազգականները, ինչ որ չէր կրցած ընել անոր ողջութեան: Թ. Արփին, «Օրը օրին» սիւնակի հեղինակը, իր կողմէ կ'աւելցնէր թերթին մէջ, թէ «այդ օրերը չեն վերադառնար»... ու կերպով մը ինք ալ վերադարձի եւ յոյսերու դռները կը փակէր Ֆեթիյէ Չէթինի դիմաց:

Ես ալ, շատ ու շատ ընթերցողներու հետ միասին, կրնայի կարդալ յօդուածը, ցաւիլ, տրտմիլ, տրտմօրէն ժպտիլ դառն ճակատագրին վրայ ու անցնիլ: Բայց յօդուածին մէջ անուն մը կար՝ Հապապ: Իմ Հաւան էր, մօրս ծննդավայրը, գիւղ՝ ուր եղած եմ քանիցս, ես զիս խաչակնքած, եւ անոր աղբիւրէն ջուր խմած եմ, Քաղցրահայեաց վանքի պատերուն մոմ եմ վառած, քիւրտ վարորդս՝ վանքի հողը ճակատիս է քսած: Չէի կրնար անտարբէր մնալ: Յետոյ՝ յիշեցի որ մայրս իմ մանկութեան կը խօսէր «Կատարկանց» Գարեգինի մասին, Կատարեաններու մասին... Եւ ես ինձի խոստացայ այդ Հերանոյշին արմատները գտնել: Բայց ինչպե՞ս: Միակ կենդանի հասցէն քեռիս էր, Սուրէն քեռիս, որ արդէն 100-ի կը մօտենայ, ու կ'ապրի Նիւ Ճըրզիի մէկ քաղաքը: Այս Մարտի սկիզբին գացի մօտը: Ինք սովորութիւն ըրած է փոքրիկ թղթիկներու վրայ մտքէն անցած հարցերը գրի առնել, որպէսզի երբ իրարու հանդիպինք, հարցնէ, լուսաբանուի, քննարկէ հետս, վիճի՝ ցնոր հանդիպում: Երկու երեք տարիէ ի վեր այս է մեր կեանքը: Բայց անցեալ Մարտին, ես էի, որ հարցումներով մօտեցայ իրեն:

«Քեռի՛, Հերանոյշ Կատարեան մը կը յիշե՞ս»:

Կը յիշէր անշո՛ւշտ պիտի յիշէր: Քեռին ազգագրական բառարան է անձնանուններու բառարան է, շրջուն մատենադարան է, հայոց պատմութիւն, հայ դատ, ամերիկահայոց պատմութիւն անգիր գիտէ: Հաւաւը սակայն տարբէր կերպով կը յիշէ, տուն առ տուն, քար առ քար գիտէ: Գիտէ իրենց այգին, խաղողներուն տեսակները, այգիի պատերու տակ բուսած ծառերը, վանքի ցախերը: Ամէն բան գիտէ: Եւ կամաց-կամաց Հերանոյշի ազգաբանութիւնը կը ծաղկէր, ընտանեկան ձառի մը նման կը ծաւալէր... Ու ես նօթեր կ'առնէի, որոնք այսօր միայն, Սեւիլյայի մէջ, թուղթին պիտի յանձնէի: Միլիոնէն մէկուն յիշատակին: Տասնամեայ Հերանոյշի յիշատակին՝ որ 1915-ին թրքացաւ, Թուրքիա մնաց: Մայրս, քեռիս հազարներ իրենք ալ ստիպուած թրքացեր էին, Մուսթաֆա, Ձէքիէ անուններ առեր էին, բայց յաջողեր էին իրենց ազգին դառնալ: Հերանոյշ չէր կրցած... կոչուեր էր ու մնացեր Սէհէր:

Ու քեռիս հետ սկսանք յիշատակներու ճամբորդութեան: Հետզհետէ դէմքեր եկան, դրուագներ, անուններ եկան, հեռաձայնի թիւեր գտնուեցան: Փոքրիկ Հաւաւի ժողովուրդը, հիմա քարտէս էր դարձեր Ամերիկայի մէջ: Հերանոյշը եղբայր մը ունէր, Խորէնը, որ տակաւին քանի մը տարի առաջ իր թոռան, Տէյվիդի հետ եկեր ու այցելէր էր Սուրէնին:

Քեռիս կը պատմէր, որ Հերանոյշի հայրը՝ Յովհաննէսը ամուսնացեր էր Իսկուհի Արզումանեանի հետ ու Ամերիկա էր, երբ մեծ աղետը կը պատահէր: Բայց 1920-ական թուականներուն էր միայն, որ կը վերադառնայ արեւելք, եւ Սեւերեկի՞ թէ Հալեպի մէջ կը գտնէ իր աղջիկը՝ Հերանոյշն ու որդին՝ Խորէնը: Խորէնը հօր հետ Ամերիկա կուգայ, բայց Հերանոյշ, որ արդէն իսկ թուրքի մը հետ ամուսնացած էր, կը հրաժարի, կը խնդրէ հօրմէն որ զինք թողու իր նոր կեանքին հետ: Յովհաննէս կը վերադառնայ Ամերիկա, ուր իր բոյնը կը վերաշինէ, կ'ունենայ ուրիշ զաւակներ ալ, Հրանտը, Մարգարիտը: Քեռիս կը խօսի, կը պատմէ թէ Օհանը (Յովհաննէսը) մեծ ընտանիքի զաւակ էր. վեց տղայ ու մէկ աղջիկ էին եւ անուններն ալ կը թուէ - Հրանտ, Պօղոս, Ստեփան,

Կարապետ եւ Մանուկ: Աղջկան անունը անշուշտ մոռցած էր: Ու յանկարծ քեռին կը փղձկայ, կը յիշէ Մանուկը, որ փոքր տարիքին ծանր կը հիւանդանայ, ամբողջ գիւղը կ'աղօթէր որ երախան փրկուէր. երախան ազատեցաւ, բայց թուրքերը 1915ին սպաննեցին զինք. ի՞նչ օգուտ: Աւելի տխուր էր Ստեփանի ճակատագիրը: 1915ին բանտարկէր էին զինք, ու երբ Սուրէն քովը գացեր էր, Բալուի բանտի ճաղերը պիտի քանդէր Ստեփան, աղիողորմ հարցնէր Սուրէնին.

-Մեր տունէն ո՞վ մնաց...

Հիմա որ այս տողերը կը գրեմ, Ֆեթիխէի ձեռքը պիտի անցնի՞ն, ի՞նչ պիտի մտածէ: Պիտի ըսէ՞ այդ օրերը երթան եւ չվերադառնան... Բայց ի՞նչ պիտի ըսէ Ահարոնեան, որ կոյր Աշուղի բերնով կը մղկտար.

Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք, Թող ողջ աշխարհ կարգայ հային նախատինք:

Շարունակեցի պրպտումներս: Այդ օրերուն անցայ «AOL»-ի վրայ գտայ հասցէները Խորէնին դասեր՝ Վիրճինային, որ Նիւ Ճըրզիի հարաւային մէկ քաղաքը կը գտնուի: Երկու զուակ ունի՝ Տեյվիդն ու Միշելը: Քոյր մըն ալ ունի, Սիլվիան, որ Անահայմ. Գալիֆորնիա կ'ապրի: Աւելի յուզիչ էր խօսակցութիւնս Հերանոյշի քրոջ, Մարգրիտի հետ, որ կ'ապրի Ուստրի մէջ, ըստ երեւոյթին բաւական ալ աշխոյժ կերպով կապուած է տեղւոյն Մբ. Փրկիչ եկեղեցւոյ կեանքին: Մարգրիտը ամէն բան կը յիշէ, ու կ'աւեցնէ, որ երեք զուակ ունի՝ Ռիչըրտը, Նենսին, Տէպորան: Երկու հաս ալ թոռնիկ ունի՝ Էտուրըտ, Լորին: Օր մը հաւանաբար հանդիպիմ Մարգրիտին, համով մայր մըն է, իրեն նմանները շատ եմ տեսեր Ամերիկայի մէջ: Տարիքոտ, եկեղեցասէր՝ անոյշ խմորեղէն կը պատրաստեն, անոնք եկեղեցւոյ «պազարներուն» կը պատրաստուին եւ իրենց հետ կը բերեն անուշութիւնը հայ մայրութեանը՝ Շահնուրի «պճեղ մը անոյշ սիրտ»ին... Տիկին Մարգրիտ կը խօսի, կը պատմէ: Կը յիշէ իր քրոջ պատմութիւնը, թէ ինչպէս եղբայրը՝ Խորէնը, 50-ական թուականներուն յաջողէր էր Թուրքիա դրամ դրկել, որ քոյրը Հերանոյշ Ամերիկա գայ ու այցելէ իր ազգականութեան: Այն ատեն ալ Հերանոյշ կը մերժէ գալ Ամերիկա ու փոխարէնը իր որդին՝ ...Մահմուտը կը դրկէ: Մահմուտը կու գայ, եւ գայթակղութիւնը կը փրթի: «Թուրք օղլու թուրք էր» կ'ըսէ Մարգրիտ: Եւ կ'աւելցնէ, «Նիւ Եորքի մէջ բոլոր ազգականները շատ ծանր ազդուեցան, չէին ուզեր տեսնել, ընդունիլ զինք: Ես ալ առի ու Մահմուտը հետս Ուստր բերի, որ քիչ մը խերսերնին իջնէ...» Իջա՞ւ, չիջա՞ւ, Հերանոյշի ազգականները կըրցա՞ն ընդունիլ Մահմուտը իբրեւ իրնց հարազատը: Այդքանը չեմ գիտեր: Բայց երեւի այս Մահմուտին աղջիկն է Ֆեթիխէ Չէթինը: Աստուած գիտէ: Այս բոլորը գիրին կը յանձնեմ, չեմ գիտեր թէ ինչու՞ կ'ընեմ: Ֆեթիխէն յոյս կա՞յ, թուրք օղլու թուրք Մահմուտին աղջիկը ի՞նչ պիտի ընէ, արդէօք արեան ձայնը պիտի կանչէ՞, եւ յետոյ ի՞նչ, Ֆեթիխէն ընդունի՞նք մենք, մենք, որ հիմա Ռիչըրտ ենք եղեր, Տէպորա, Նենսի, Սիլվիա, Վիրճինիա: Աստուած իմ, «այս ճակատագիրն ինչ սեւ է»: Ու 1915թ. անգամ մը եւս իր ահաւորութեամբ կուգայ կը գրաւէ ողջ էութիւնս: 1915ը կը շարունակուի, եղե՞ռնը կը շարունակուի: Հայագուրկ Հայաստանը կը պոռա յ, հայ կը փնտէ: Հողագուրկ հայը կը թափառի օտար ափերու վրայ, աշխարհաքաղաքացի, անհող, անճակատագիր, զանազան ու զարմանազան անուններով:

Ֆեթիխէ Չէթին: Ահա քու ընտանիքիդ պատմութիւնը: Մեծ մօրդ, հօրը պատմութիւնը: Մեծ մօրդ հօր անունը Յովհաննէս էր, մօրը անունը Իսկուհի: Մեծ հօրդ անունը Հայրապետ էր: Հայրապետ Կատարեան: Հայրապետը Հաւալի մէջ ծանօթ անուն էր՝ Հայրապետը Հաւալի Ս. Կաթողիկէ եկեղեցւոյ թաղական էր, լաւ ուսուցիչ, երաժիշտ, պաշտօնավարած է Արդընի Մատեն, Քոյի: Բայց աւելի ծանօթ է իր եղբայրը Անդրէաս վարժապետը, անոր աշակերտ էին եղած Եղիշէ Արք.

Դուրեանը, Մելքոն Կիրճեանը, շատ ուրիշներ...

Վերջացնելու համար ահա կ'արտագրեմ «Բալու» գրքի հեղինակ Յարութին քահանայ Սարգիսեանի մէկ գրութիւնը՝ նոյն այս Անդրեաս վարժապետին մասին:

«Անդրեաս Վարժապետ Կատարեան մէկն էր գաւառի գաւակներէն. կարճահասակ, սակաւախօս, թաւ յօնքերու տակ ծածկուած խոհուն աչքերով, որոնք յաճախ դէպի վար կը հակէին. թաքնուած արժէք մըն էր, իր գիւղին մէջ ուսուցչութիւն ալ ըրած էր:

1892ին որպէս քահանայ Ս. Յակոբայ թաղին, Թլկատինցիի վարժարանին կրօնի ուսուցիչ կարգուած էի. միանգամայն կը հետեւէի հայագիտական դասաւանդութիւններուն: Օր մը ուսուցիչի կողմէ խնդրուեցաւ ինձմէ գրաբար պարբերութեան մը քերականական լուծումը կատարել կամ գոնէ պատասխանել, թէ «Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին է եւ փառքդ անհասանելի» նախադասութեան մէջ, «որոյ կարողութիւնդ»ի դ տառը ինչո՞ւ եւ ի՞նչ կանոնով տրուած է գոյականին:

Ես նոր սկսած էի գրաբարին հետեւիլ. բնականաբար պիտի չկրնայի պատասխանել յիշեալ հարցումին. ուստի դիմեցի Թլկատինցիին.

- Ատիկա ճարտասանական ոճով յօրինուած նախադասութիւն մըն է եւ ոչ աւելին, - պատասխանեց ան:

Ես տարակոյսի տակ մնացի. նոյն օրը, կէսօրին, դիմեցի Անդրեաս վարժապետին, որ այդ օրերուն Խարբերդ կը գտնուէր. պարզեցի խնդիրը անոր եւ լուծում խնդրեցի:

Անդրեաս վարժապետ գլուխը վեր առաւ առանց որեւէ վարանումի, կարծես թէ պատրաստուած ըլլար այդ հարցումին պատասխանելու, ժպիտով մը ըսաւ.

Տէ՛ր Հայր, Հայր Բագրատունիի «Տարերք Քերականութեան» մէջ յարաբերական դերանուն մասին կանոն մը կայ, ըստ որում, ան յօդ չ'աններ, բայց իր յօդը իր գոյականին կու տայ. արդ, փոխանակ ըսելու՝ «Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւն...», դ դիմորոշ յօդը տալով իր գոյականին, կազմած են «Տէր Աստուած որոյ կարողութիւնդ անքնին...» նախադասութիւնը:

Շնորհակալութեամբ բաժնուեցայ իրմէ եւ ուղղակի վարժարան շտապեցի, գտայ Թլկատինցին, որ կը գտնուէր ուսուցչական խումբին հետ, անոր հաղորդեցի Անդրեաս վարժապետին բացատրութիւնը:

Թլկատինցին իր հիացումն յայտնեց անոր մասին.

- Վա՛յ քեա՛ֆիք, ինչպէս միտքը պահեր է. այսպէս ժամանակի մը մէջ՝ որ «Տարերք Քերականութեան» անունը անգամ մոռցուէր է...

«Աստուծոյ ծաղրն է աշխարհն ալ արդէն...»:

Հէզ Դուրեանը պիտի գար եւ օգնէր ինձի, որ փակէի այս գրութիւնը, որ իւրահատուկ ոգեկոչում մը եղաւ Ապրիլ 24ին. «Տէր Աստուած, որոյ կարողութիւնդ անքնին է...» Տէր Աստուած իմաստութիւն տուր որ հասկնամ այս բոլորը եւ Անդրեաս վարժապետէն, Հայրապետ

Կատարեանէն մինչեւ Ֆեթիիյէ Չեթին, մինչեւ Ռոզ, Տէյվիդ, Ռիչըրտ եւ Լորին ո՞ւր ենք եւ ուր
կ'երթանք:

Մեսրոպ Արք. Աշճեան
24 Ապրիլ, Մեվիլյա
«Պահն ու Յաւերժութիւնը», Մուղնի Հրատ., 2002, Երեւան